ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 109-Ա

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կապան համայնքի վարչական սահմաններում, բնակելի տների տնամերձ հողամասերին կից՝ քաղաքացիների կողմից ավել օգտագործվող հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն.

1) Շղարշիկ թաղամասի թիվ 106/2 հասցեում Գևորգ Ավետյանի կողմից ավել օգտագործվող 0.01582 հա հողամասը,

2) Կավարտ թաղամասի թիվ 68/1 հասցեում Բաղդասար Մանասյանի կողմից ավել օգտագործվող 0.05984 հա հողամասը,

3) Լենհանքեր թաղամասի թիվ 18/1 հասցեում Ռազմիկ Հարությունյանի կողմից ավել օգտագործվող 0.00505 հա հողամասը,

4) Երկաթուղայինների փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 38/1 հասցեում Ամասիա Թումանյանի կողմից ավել օգտագործվող 0,11819 հա հողամասը,

5) Երկաթուղայինների փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 40/1 հասցեում Աշոտ Ասատրյանի կողմից ավել օգտագործվող 0,08726 հա հողամասը,

6) Երկաթուղայինների փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 63/1 հասցեում Աննա Մկրտչյանի կողմից ավել օգտագործվող 0,00551 հա հողամասը,

7) Գ.Նժդեհի փողոցի 1-ին նրբանցքի թիվ 74/1 հասցեում Կարո Աղաբեկյանի կողմից ավել օգտագործվող 0,00398 հա հողամասը:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (10)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2018 թ սեպտեմբերի 26
ք. Կապան